ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հետազոտող՝ Անահիտ Բունիաթյան

ՀՀ Սյունիքի մարզի Որոտանի միջնակարգ դպրոցի դասվար

Ղեկավար՝ Թամարա Աթայան

Գորիս 2023թ.

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքը, հասարակական կարևորագույն սոցիալական ինստիտուտ լինելով, տարբերվում է մյուս սովորական հանրույթներից: Ընտանիքն է այն նախնական կարևորագույն օղակը, որում իրականացվում է երեխայի առաջնային սոցիալականացումը և հարմարումը հետագա կյանքին: Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, հիմք է հանդիսանում երեխայի սոցիալականացման գործընթացի հիմնական փուլերի ձևավորմանը՝ նրան անհատից դարձնելով անձ, ապա՝ անհատականության: Հասարակական կյանքի փոփոխմանը զուգահեռ՝ բնականաբար փոխվում են սերնդի արժեքային կողմնորոշումները, նախասիրությունները և պահանջմունքները, ուստի ներկայումս ևս անփոխարինելի են սոցիալական տարբեր ինստիտուտներն ավանդական արժեքների պահպանման և փոխանցման հարցում: Ցանկացած դարաշրջանում էական է ընտանիքի դերակատարությունը՝ որպես ավանդական արժեքների վերարտադրող և հասարակական տվյալ պայմաններին համապատասխան նոր արժեքների կրող, քանի որ ընտանիքը համարվում է ոչ միայն սոցիալական դաստիարակության ինստիտուտ, այլև նրանից է բխում ազգապահպան վճռորոշ գործոնների դրսևորումները:

Մեր հետազոտական *աշխատանքի նպատակներն* են.

1. բացահայտել ընտանիքի դերը երեխայի սոցիալականացման և դաստիարակության գործում,
2. ներկայացնել ընտանիքն իբրև դաստիարակության առաջնային օղակ:

Ուսումնասիրության նպատակներն իրականացնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ *խնդիրները*.

1.Ուսումնասիրել երեխաների դաստիարակության և սոցիալականացման առանձնահատկությունները:

2.Կազմակերպել փորձարարական հետազոտություն՝ բացահայտելու դաստիարակչական աշխատանքներին առավել նպաստող գործոնները:

# 1.ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ընտանիքն ունի հասարակական նշանակություն ունեցող գործառույթներ, որոնք բխում են հենց հասարակության պահանաջներից: Որպես առավել լայն, հասարակական կառուցվածքի տարր՝ ընտանիքը բազմաֆունկցիոնալ է, ըստ այդմ էլ կարելի է առանձնացնել ընտանիքի կողմից կատարվող հիմնական գործառույթները: Ընտանիքն ապահովում է *վերարտադրողականությունը* կայուն ընտանեկան զույգերի ստեղծման ճանապարհով: Ընտանիքը նվազացնում է կոնֆլիկտների մեծ քանակը՝ ներառյալ ժառանգականության իրավունքի հետ կապված խնդիրները: Ընտանիքը կատարում է աճող սերնդի *սոցիալականացման* գործառույթ: Ընտանիքը երեխաների համար համարվում է առաջնային խումբ, որտեղից էլ սկսվում է անձի զարգացումը: Երեխայի մոտ միշտ էլ մնում են վաղ մանկության շրջանից ընտանիքի հիմնական վարքային նմուշները: Երեխաների ընտանեկան դաստիարակության ամուր հիմքը ծնողների՝իրար նկատմամբ ունեցած սերն է: Այն ընտանիքում, ուր չկա հոր և մոր փոխադարձ ամուր սեր, այնտեղ չկա և չի կարող լինել երեխաների դաստիրակություն:

Ընտանեկան սոցիալականացման հիմնական միջոցը համարվում է երեխաների կողմից ընտանիքի չափահաս անդամների վարքի մոդելների ընդօրինակումը: Ընտանեկան սոցիալականացումը երկու իմաստ ունի. ***ա.****ապագա ընտանեկան դերի նախապատրաստում,* ***բ.****ընտանիքի միջոցով սոցիալապես հասուն անհատի ձևավորում:* Ընտանիքը առանձին սոցիալական օղակ է, որտեղ հիմք է դրվում անձի ձևավորմանն ու զարգացմանը որպես հասարակության լիարժեք անդամ: Ընտանիքում երեխան սովորում է խոսել, մտածել, դաստիարակվում համաձայն հասարակության նորմերի, սովորույթների, արժեքների: Ընտանիքում է սկսում ձևավորվել նրա աշխարհայացքի առաջին տարրերը: Ընտանեկան սոցիալականացման հիմնական առանձնահատկությունները են դրա ինտենսիվությունը, բազմակողմանի բնույթը, բացի այդ ունի նաև անհատական ուղղվածություն, այսինքն՝ երեխային վերաբերում է որպես միակ, անկրկնելի անհատի, որը կարևոր դեր է խաղում երեխայի անձի ձևավորման վրա:

*Ընտանեկան դաստիարակության* յուրօրինակությունն ու անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն իր բնույթով զգացմունքային է, որովհետև դրա «ուղեցույցը» երեխաների հանդեպ ծնողների տածած սերն է և երեխաների պատասխան զգացմունքը ծնողների նկատմամբ /կապվածություն, փոխվստահություն/: Այսպիսով՝ ընտանիքը էմոցիոնալ, զգացմունքային խումբ է, որում երեխաները ձևավորվում են, և որն էլ նպաստում է նրանց *սոցիալականացմանը:*

Ընտանեկան փոխհարաբերություններում այս գործառույթների ազդեցությունը կարող է ունենալ երկակի բնույթ. ընտանիքում ամուսինների, ավագ և կրտսեր սերունդների միջև տնտեսական-կենցաղային աշխատանքի արդարացի բաժանումը որպես կանոն նպաստում է ամուսնական հարաբերությունների ամրապնդմանը և երեխաների դաստիարակությանը. իսկ այդ աշխատանքի անարդարացի բաժանման ժամանակ, մեծանում է դրա քայքայիչ ուժը ընտանիքում:

Ընտանիքը կատարում է իր անդամների համար *սոցիալական աջակցության և պաշտպանության* ֆունկցիան: Այս ֆունկցիան տարբեր հասարակություններում տարբեր չափով է իրականացվում: Այն հիվանդության և ծերության ընթացքում ապահովում է ֆիզիկական խնամք, ճգնաժամային իրավիճակներում՝ էմոցիոնալ աջակցություն և այլն: Ընտանիքը կարգավիճակի ամրագրման առաջնային մեխանիզմ է: Յուրաքանչյուր երեխա այս կամ այն սոցիալական կարգավիճակը ստանում է այն բանի հիման վրա, թե ինչպիսի ընտանիքում է ծնվել: *Հաղորդակցման գործառույթի* իրականացման ժամանակ ընտանիքի անդամները միմյանց տեղեկություններ են հաղորդում, միմյանց մեջ հոգեվիճակներ են ստեղծում, մղում են գործողությունների և նպաստում են մեկը մյուսի զարգացմանը: Այստեղ ընտանիքը հանդես է գալիս իբրև միջնորդ հաղորդակցության մասսայական միջոցների և իր անդամների հատկապես երիտասարդ սերնդի միջև, որի ճաշակը նա անմիջականորեն ձևավորում է:

Անձի սոցիալականացումն ընթանում է այն միջոցներով, որոնք հատուկ են տվյալ հասարակությանը, ինչպիսիք են երեխաների սնունդը, խնամքը, ընտանիքում խրախուսանքի և պատժի միջոցները: Նույնը գործում է ուսումնական, մասնագիտական խմբերում, կյանքի տարբեր ոլորտներում:

«Սոցիալականացում» հասկացության իմաստը բացահայտվում է *ադապտացիա, ինքնազարգացում, ինքնիրացում* գործընթացներով, որոնց միասնությունն էլ ապահովում է անձի օպտիմալ զարգացումը նրա ողջ կյանքում: Այդ գործընթացն անընդհատ է և բաժանվում է իրար հաջորդող մի քանի փուլերի:

Կարելի է տալ սոցիալական փուլերի հետևյալ բաժանումը. *առաջին կամ վաղ փուլ,* որն ընդգրկում է երեխայի ծնդից մինչև ծննդից դպրոց ընդունվելը և ապա՝ ամբողջ դպրոցական ուսուցումը: *Երկրորդ փուլն* ընդգրկում է մարդու հասունացումը և աշխատանքային գործունեությունը: Այստեղ դժվար է որոշել սահմանը, որոհետև այն ներառում է աշխատանքային գործունեությունը մինչև նրա դադարեցումը: *Երրորդ փուլը* սկսվում է անձի աշխատանքային գործունեության դադարեցումից, անձի տարեց տարիքում:

Սոցիալականացման գործընթացում անձը կատարում է տարբեր, բազմաբնույթ դեր: Դրանց միջոցով անձը զարգանում է, դրսևորում իրեն: Այդ դերերի միջոցով կարելի է պարզել կամ պատկերացում կազմել նաև այն աշխարհի մասին, որով անցել է նա:

## 2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Մարդու անձի զարգացման ու ձևավորման մեջ գլխավոր գործոնը դաստիրակությունն է: Դաստիարակությունն ընդունված է անվանել մարդու հարմարումը գոյության պայմաններին: Դաստիարակության հիմնական նպատակը նոր ծնված երեխայի անձի ձևավորումն ու նրա հետագա զարգացումն է: Կազմակերպված նպատակաուղված ու նպատակասլաց դաստիրակությունը հասարակական գործունեություն է: Այն իրականացնելու համար հասարակությունն օգտագործում է իր ձեռքի տակ եղած բոլոր միջոցները, օրինակ արվեստը, գրականությունը, լրատվական միջոցները, ժամանակակից միկրոտեխնիկան, մշակույթը, նրա հիմնարկները, ուսումնական հաստատությունները, հասարակական կազմակերպությունները, ընտանիքը և այլն:

Ընտանիքում երեխաների ճիշտ դաստիրակության առաջին պայմանը ընտանեկան կոլեկտիվի համախմբումն ու ձևավորումն է, ամուր կարգապահության

ստեծումը և ամրապնդումը, կոլեկտիվի անդամների մեջ պարտքի և պատասխանատվության խոր զգացումն, երեխաների՝ իրար նկատմամբ սիրո և հարգանքի, բոլոր հարազատների, մերձավորների, ուրիշների նկատմամբ բարձր գիտակցության և զգացմունքների ձևավորումն է: Ընտանեկան դաստիրակության կարևոր պայմաններից մեկը չափվածությունն է (չափի զգացումը) ամեն ինչում: Չի կարելի անընդհատ սիրել երեխային կամ անընդհատ ատել, անընդհատ գովեստների արժանացնել կամ ենթարկել պարսավանքի, միշտ խրախուսել կամ պատժել, նրա բոլոր պահանջները կատարել կամ չկատարել և այլն: Ծնողների բոլոր գործողությունները պետք է լինեն չափավորված և դուրս չգան անհրաժեշտության սահմաներից, կարելի է – չի կարելի սահմաներից: Ծնողների սկզբունքայնությունը, վճռականությունը, օբեկտիվությունը երեխաներին ճիշտ դաստիարակելու երաշխիքներն են: Ընտանեկան դաստիարակության մյուս պայմանը երեխաների հայրենասիրական, հումանիստական, աշխատանքային զգացմունքների ձևավորումը և դաստիրակությունն է:

Հասարակությունը, պետությունը մարդուն նախապատրաստում են կյանքի և աշխատանքի համար, հետևապես նաև պետք է ունենա հասարակական վարք և օժտված լինի հասարակության կողմից ընդունված նորմերով: Հետևաբար անձի զարգացման և ձևավորման համար անժխտելի է դաստիրակության և առհասարակ ընտանեկան դաստիարակության դերն ու նշանակությունը:

Երեխայի դաստիարակությամբ զբաղվողը պետք է.

- ճանաչի երեխայի շրջապատը, խորամուխ լինի նրա մեջ, իմանա այնտեղից դեպի երեխան եկող ներգործությունը,
- հաշվի առնի ինչպես երեխայի ընտանեկան պայմանները, ծնողների, եղբոր, քրոջ փոխհարաբերությունները նրանց ներգործունեությունները, այնպես էլ թափանցի երեխայի ներաշխարհը, ճանաչի նրա էության բոլոր կողմերը, իմանա նրա հետաքրքրությունները, ներքին պահանջմունքներն ու ընդունակությունները, ներանձնային ռեսուրսները և այլն:

Չպետք է մոռանալ, որ բոլոր տարիքների դաստիարակության գործում մեծ է ուսումնական և կրթության նշանակությունը: Դպրոցական պրակտիկան և գիտնականների հետազոտությունները հաստատել են, որ ուսուցման, կրթության գործընթացներում են ձևավորվում սովորողների՝ բարոյահոգեբանական, աշխատանքային, գեղագիտական հայացքները ու համոզմունքներն, ինչպես և հասարակության մեջ վարքի ու գործունեության եղանակները, փոխհարաբերությունները, պահանջմունքների համակարգը և այլն:

Ընտանեկան դաստիարակության գործընթացում ձևավորվում են անձի բարոյական այնպիսի որակներ, որոնք երեխաների դաստիարակությամբ զբաղվող ուրիշ մասնակիցներ չեն կարող այդկերպ զարգացնել: Դաստիարակության գործընթացը ճիշտ կազմակերպելու դեպքում այն իր բարերար ազդեցությունն է ունենում ուսուցման ընթացքի վրա:

## 2. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Հոգեբանության, մանկավարժության, իսկ առավել ևս երեխաների դաստիարակության և սոցիալականացման հարցերը դեռևս վիճահարույց են: Պարբերաբար իրականացվող սոցիալական հարցումները թույլ են տալիս հանրությանը հուզող շատ հարցերի պատասխաններ գտնել հենց հասարակության միջոցով: Աշխատանքի արդյունքները ներկայացրել ենք մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությամբ և ամփոփմամբ:

Գիտափորձն իրականացրել ենք երկու փուլով՝ նախապատրաստական փուլ, որի ընթացքում հավաքագրել ենք թեմային վերաբերող մի շարք նյութեր: Երկրորդը գործնական փուլն էր. այն է՝ սոցիալական հարցում անցկացնել ծնողների շրջանում, ովքեր ունեն տարբեր տարիքի երեխաներ: Հարցումն անց է կացվել Գորիսի թիվ 1 դպրոցի ծնողների շրջանում, որոնք ակտիվորեն մասնակցել են հարցմանը, որի շնորհիվ կարողացել ենք առավել հստակ պատկերացում կազմել մի շարք հարցերի վերաբերյալ. *ինչպե՞ս են վերաբերվում հայ ծնողները ժամանակակից և ավանդական ընտանիքներին, ո՞վ է առավել շատ զբաղվում ընտանիքում երեխայի դաստիարակությամբ, ինչպիսի՞ ազդեցություն ունի*

*մշակույթը երեխայի դաստիարակության վրա, դաստիարակության հարցում ո՞րն է համարվում առաջնային օղակ՝ ընտանի՞ք, միջավա՞յր, թե՞ ժառանգականություն* և այլն:

## ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

1.Ձեր կարծիքով ո՞ր տարիքից պետք է սկսել երեխայի դաստիարակությունը:
ա/ 0-3 բ/ 3-6 գ/ 6-16
2.Ձեր կարծիքով նշվածներից ո՞րն է երեխայի դաստիարակության և սոցիալականացման առաջնային օղակ:
ա) ընտանիք (անցում 2.1) բ) միջավայր (անցում 2.2) գ) ժառանգականություն (անցում 3)
2.1 Ինչպե՞ս է ձևավորվում երեխայի արժեհամակարգն ընտանիքում:
2.2 Ինչպե՞ս է ձևավորվում երեխայի արժեհամակարգը միջավայրում (դպրոց, մանկապարտեզ և այլն):
3. Ինչպիսի՞ ներգործություն ունի ժառանգականությունը երեխայի կայացման վրա:
4.Դաստիարակության ի՞նչ մեթոդներ եք օգտագործում:
ա) պատիժ բ) զրույց գ) խրախուսանք
5. Ի՞նչ սկզբունքներից ելնելով եք ընտրում տվյալ մեթոդը:
6. Ո՞ր տեսակի ընտանիքին եք կողմնակից:
ա) ավանդական բ) ժամանակակից
7. Ձեր կարծիքով ազգային ավանդույթներն ինչպիսի՞ ազդեցություն ունեն երեխայի դաստիարակության և սոցիալականացման վրա:
ա) դրական բ) բացասական գ) չեզոք
8.Ձեր կարծիքով հայ ընտանիքում ո՞վ է ամենաշատը զբաղվում երեխայի դաստիարակությամբ:
ա) հայրը բ) մայրը գ) տան մեծահասակ անդամները
9. Ձեր կարծիքով մշակութային միջավայրը կարո՞ղ է ազդել երեխայի դաստիարակության և սոցիալականացման վրա:
ա) այո բ) ոչ
10. Ձեր կարծիքով մշակույթի ո՞ր ճյուղերն են ավելի շատ ազդում երեխայի դաստիարակության վրա:
ա) երգարվեստ բ) նկարչություն գ) պարարվեստ դ) այլ
11. Ծանո՞թ եք այլ երկրներում երեխաների դաստիարակության մեթոդներին:
ա)այո բ) ոչ
12. Քանի՞ տարեկան է Ձեր երեխան:

Հարկ է նշել, որ արդյունքներն ամփոփելիս հետաքրքրական էր այն, որ առավել երիտասարդ ծնողները կողմնակից էին ավանդական ընտանիքին, իսկ մեծահասակները նախընտրում էին ժամանակակից ընտանիքը: Գուցե պատճառն այն է, որ երիտասարդները, աշխատելով ներկայիս սերնդի հետ, զգում են, որ

ժամանակակից դաստիարակությունը, համենայն դեպս հայ հասարակությունում, դեռևս ցանկալի պտուղներ չի տալիս: Ըստ ստացված արդյունքների՝ 54%-ը կողմնակից է ժամանակակից ընտանիքին, իսկ 46%-ը՝ ավանդականին: Իսկ դաստիարակության վրա ազգային ավանդույթների ազդեցությունը դրական է 88%-ի համար, բացասական՝ 4%-ի համար, իսկ 8%-ի կարծիքով՝ այն ոչ մի ազդեցություն չի կարող ունենալ երեխայի դաստիարակության վրա:

Միտում կա նաև երեխաների դաստիարակության մեթոդների առավել ժողովրդավարական մեթոդին անցնելուն, այսինքն՝ առավել նախընտրելի է համարվում զրույցը, թեպետ նշում են նաև, որ երեխան կա՛մ պետք է հարգի, կա՛մ պետք է վախենա: Ինչպես և դեռ շարունակում է տարածված մնալ այն կարծիքը, որ ծեծով ավելի լավ են հասկանում: Դաստիարակության մեթոդներից մենք առանձնացրել էինք պատիժը, զրույցը, խրախուսանքը: Հարցվողների միայն 19%-ն է ընդունում պատիժը՝ որպես երեխայի վրա ազդող կարևոր գործոն, 12%-ը՝ խրախուսանքը, իսկ 69%-ը՝ զրույցը:

**Դաստիարակության ինչ մեթոդներ եք օգտագործում**



Արդյունքները ցույց են տալիս, որ հայերը հատկապես «ժլատ» են խրախուսելիս, քանի որ կարծում են, որ դա երեխային կարող է դարձնել ինքնահավան, մի մասն էլ կարծում է, որ այն դրական ազդեցություն ունի. երեխան դրանից ավելի է ոգևորվում: Ծեծը՝ որպես մեթոդ, դեռևս շարունակում է մեզանում տարածված լինել, ծնողները կարծում են, որ եթե պատժում ես, ապա երեխան ավելի լավ է հասկանում: Թերևս մտահոգիչ է նաև այն, որ ծնողների մեծ մասը կարծում է, որ պատիժը միայն ծեծն է, մինչդեռ պատժել նշանակում է նաև երեխային ինչ-որ բանից զրկել: Ամենից տարածված արդյունավետ մեթոդը եղել ու մնում է *զրույցը:* Զրույցի ընթացքում կենդանի օրինակների միջոցով, նրան արարքի լավ ու վատ կողմերը բացատրելով ավելի մեծ արդյունքի կհասնենք: Դրանից բացի՝ զրույցը նաև մտերմացնում է ծնող-երեխա հարաբերությունները, երեխաներն ավելի շատ են վստահում ծնողներին, խնդիրներ ունենալիս ավելի հաճախ են դիմում նրանց: Զրույցի միջոցով նաև կարողանում են երեխային դաստիարակել առանց նրա անհատականությունը վիրավորելու, հոգեկան աշխարհը խեղաթյուրելու, ինչը կարող է երեխային դարձնել ագրեսիվ և ավելի վտանգավոր:

**Ձեր կարծիքով ո՞ր տարիքից պետք է սկսել երեխայի դաստիարակությունը**




Հարցվողների 83%-ը կարծում էր, որ երեխային պետք է սկսել դաստիարակել 0-3 տարեկանում, 14%-ը՝ 3-6 տարեկանում, 3%-ը՝ 6-16 տարեկանում: Այս ցուցանիշները միանշանակ վկայում են այն մասին, որ հայ ծնողները կողմնակից են առավել վաղ տարիքում դատիարակությանը, ինչպես մի շարք երկրներում: Երեխայի գեղագիտական դաստիարակության անհրաժեշտության տեսանկյունից Հարցվողների 94%-ը կարծում է, որ մշակութային միջավայրը շատ կարևոր է

երեխայի համար, իսկ ընդամենը 6%-ը կարծում է, որ այն բնավ կապ չունի երեխայի դաստիարակության հետ:

**Ձեր կարծիքով մշակութային միջավայրը կարող է ազդել երեխայի դաստիարակության սոցիալականացման վրա**:




Իսկ արվեստի ճյուղերից առավելապես առանձնացնում են՝ 15%-ը՝ երգարվեստ, 31%-ը՝ նկարչություն, 11%-ը՝ պարարվեստ, իսկ 42%-ը նշում էր այլ ճյուղեր, ինչպես օրինակ, տարբեր մարզաձևեր, գրականություն, ինչպես նաև բոլոր տարբերակները միաժամանակ:

Այն հարցին, թե արդյոք ծանոթ են այլ երկրներում երեխաների դաստիարակության առանձնահատկություններին, մեթոդներին, հարցվողների 44%-ը տվել է դրական պատասխան, իսկ 56%-ը՝ բացասական:

**Ծանոթ են արդյոք այլ երկրներում դաստիարակության առանձնահատկություններին**




Այստեղից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներն ավելի լայն հնարավորություններ են տալիս ծանոթանալու տարբեր երկրների բարքերին ու սովորույթներին, մի շարք հասարակական հարաբերությունների պարզաբանմանը: Բայց նաև տոկոսային հարաբերությունը ցույց է տալիս, որ այս հարցում, թերևս, թերացումներ կան, քանզի այլ հասարակությանն ինտեգրվելու, անհրաժեշտության դեպքում այդ հասարակությանն

ադապտացվելու համար անհրաժեշտ է ծանոթանալ այդ երկրների դաստիարակության առանձնահատկություններին: Ինչպես նաև համադրելով դրանք մեր ազգային դաստիարակության ավանդույթների հետ՝ կարող ենք ավելի լիարժեք քաղաքացիներ դաստիարակել:

Մեր հարցումների ընթացքում ևս մեկ անգամ համոզվեցինք, որ ընտանիքը դաստիարակության հարցում առաջնային օղակ է, թերևս, դա են ապացուցում սոցհարցման արդյունքում ստացված տվյալները:

**Երեխայի դաստիարակության ընթացքում կարևոր են**




Փաստորեն, հարցվողների 77%-ը կարծում է, որ դաստիարակության հարցում առաջնային է նախ՝ ընտանիքը, ընդ որում՝ կարևոր է համարվում ընտանիքում սիրո և հոգատարության մթնոլորտը, ծնողների միմյանց նկատմամբ հարգանքը, ընդօրինակումը: Մասնավորապես նշվում է. «Երեխան, մեծանալով լիարժեք ընտանիքում, սովորում է համբերատարություն, հանդուրժողականություն, հարգանք, ինչպես նաև՝ երեխան ընտանիքի պատկերն է, իսկ ինչ վերաբերում է ժառանգականությանը, ապա այն փոխանցվում է ընտանիքի միջոցով»:

Հարցվողների 9%-ը կարծում է, որ երեխայի կայացման գործում առաջնային է միջավայրը, քանի որ այնտեղ լսածն ու տեսածը երեխան ավելի արագ է ընկալում և դարձնում իրենը: Հարցվողների 14%-ի կարծիքով՝ առաջնային է ժառանգականությունը, քանզի «արյան հետ եկածը հոգու հետ է գնում», բնավորության գծերը պայմանավորված են գեներով: Իհարկե, հնարավոր չէ ժխտել ժառանգականության դերը, քանզի, ըստ հոգեբանների, խառնվածքը, բնավորության գծերը դրանով են պայմանավորված: Այնուամենայնիվ, այս երեք գործոններն էլ ունեն իրենց առաջնային ներգործությունը, և միայն դրանց համատեսման և միակողմանի ուղղվածության շնորհիվ կարելի է հասնել լիարժեք արդյունքների: Իհարկե, մեր

կողմից կատարված դիտարկումները դեռևս բավարար չեն առաջադրված հարցերին լիարժեք պատասխան տալու համար, բայց սա ևս մեկ քայլ է մեր հասարակության համար առաջնային համարվող հարցի՝ երեխաների դաստիարակության և սոցիալականացման առանձնահատկությունների մասին որոշակի եզրահանգման գալու համար:

**Ձեր կարծիքով հայ ընտանիքում ով է ամենաշատը զբաղվում երեխայի դաստիարակությամբ :**




Հայ հասարակության մեջ, ինչպես շատ երկրներում, դաստիարակության հիմնական բեռը դրված է մոր ուսերին. հարցվողների ընդամենը 6%-ը կարծում է, որ հայկական ընտանիքում հայրն է զբաղվում երեխայի դաստիարակությամբ, 3%-ը՝ տան մեծահասակները՝ տատիկ-պապիկները, իսկ 91%-ը՝ մայրը: Սա բացատրվում է նրանով, որ հայրն ավելի շատ զբաղվում է ընտանիքի բարեկեցությունը ապահովելով, նյութական միջոցներով ապահովելով, ինչ-որ տեղ էլ երեխայի կամակորությունները տանելով:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների ու սովորույթների վրա: Հենց դատիարակությամբ էլ նշանակալիորեն պայմանավորվում են այն փոփոխությունները, որոնց ենթարկվում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը: Երեխայի դաստիարակությունը երկկողմանի գործընթաց է՝ դաստիարակի և դաստիարակվողի փոխներգործուն գործունեություն:

Ժամանակակից հասարակության մեջ գնալով ավելի են շատանում ընտանեկան ճգնաժամերը, որոնցից դուրս գալու եղանակները դեռ պարզ չեն: Ճգնաժամը արտահայտվում է նրանում, որ ընտանիքը ավելի վատ է իրականացնում իր գլխավոր ֆունկցիան՝ երեխաների դաստիարակությունը:

Անհամերաշխ ընտանիքում, ուր չկան ընտանեկան և մանկավարժական ուժերի ճիշտ տեղաբաշխում, ընդհանուր պահանջներ, բովանդակալից շփում երեխաների և մեծահասակների միջև, մանկան հետաքրքրությունների նկատմամբ ուշադրություն, երեխաները սոցիալապես պասիվ են, չշփվող, չեն մասնակցում ընտանիքի կյանքին և աստիճանաբար հեռանում են ընտանիքի անդամներից: Մեծ դեր ունեն ընտանիքի սոցիալական դիրքորոշումների և արժեքների գնահատման համակարգը, ընտանեկան ավանդույթները: Պակաս կարևոր չեն նաև ծնողների մանկավարժական կրթությունն և կուլտուրան, ընտանիքում երեխաների կյանքն ու գործունեությունը ճիշտ կազմակերպելու հմտությունը: Մեծահասակները պետք է ջանան, որ երեխաները ընտանիքում մեծանան ոչ թե բարոյական ճառերի ազդեցությամբ, այլ այնպիսի գործնական մթնոլորտում, ուր առկա են ծնողների ու երեխաների ընկերական, ջերմ ու գիտակցական փոխհարաբերություններ, ճշմարիտ խոսքը պահպանվում է բոլորի կողմից, հարգվում են ազնվությունն ու անկեծությունը, անօգնականի նկատմամբ դրսևորվում է ուշադրություն:

Երեխաների մեջ տարիքային աճին զուգընթաց ձևավորվում է պատկերացումների առարկայացում. նրանք սովորում են տարբերակել իրենց զգացմունքները: Իր և իրեն շրջապատող մարդկանց գործողությունները կանխատեսելու, ամոթի, մեղքի, հպարտության և ինքնասիրության զգացումների զարգացմանը զուգընթաց՝բարդանում է վախերի հոգեբանական կառուցվածքը: Հարկավոր է օգնել ծնողին,որպեսզի նա կարողանա կանխատեսել երեխայի հոգեկան աշխարհի կառուցվածքային զարգացումը և գիտակցել՝ երեխան ինչպես է ապրում:

Այդ նկատառմամբ շահեկան է ծնողներին առաջարկել շարունակելու հետևյալ անավարտ դատողությունները.

- Եթե երեխան հանդիպում է քննադատության, նա սովորում է (դատապարտել)...
- Եթե երեխան հանդիպում է թշնամության, նա սովորում է (կռվել)...
- Եթե երեխան հանդիպում է մեղադրանքի, նա սովորում է (մեղքը)...
- Եթե երեխան հանդիպում է հանդուրժողականության, նա սովորում է (բարեսրտություն)...
- Եթե երեխան հանդիպում է խրախուսանքի, նա սովորում է (վստահություն)...
- Եթե երեխան հանդիպում է գովասանքի, նա սովորում է (գնահատել)...
- Եթե երեխան հանդիպում է ազնվության, սովորում է (արդարություն)...
- եթե երեխան հանդիպում է ապահովության, նա սովորում է (ինքնավստահություն)...
- եթե երեխան հանդիպում է ծաղրի ու արհամարհանքի, նա սովորում է (վախ ու երկչոտություն)...
- եթե երեխան ունենում է ընկերներ, նա սովորում է (թե ինչ բան է սերն աշխարհում)...»:

Իհարկե, մենք չենք ժխտում միջավայրի դերը երեխայի դաստիարակության հարցում, բայց սա միայն այն դեպքում է լիարժեք լինում, երբ համադրվում է ընտանիքի դաստիարակության հետ:

Պետք է նշել, որ հայ ընտանիքն այսօր մի տեսակ դեռևս կայացման փուլում է, և ակնհայտ թերացումներ այս հարցում կան: Մասնավորապես, մեր իրականությունում ծնողական գերխնամքը, դաստիարակության ավտորիտար ոճը, տատիկ-պապիկների ազդեցությունը խանգարում են երեխայի ազատ ու ինքնուրույն դրսևորվելուն: «Չի կարելիների» շարքը արդյունքում նպաստում է բարդույթավորված, անկայուն քաղաքացիների ձևավորման:

Երեխան պետք է մշտապես զգա ծնողական սերն ու ջերմությունը, անհրաժեշտության դեպքում կարգապահական տույժի ենթարկվի, ունենա հստակ «կանոնակարգ» ու նպատակներ: Ծնողը պետք է գիտակցի, որ այօրվա իր դաստիարակությունից է կախված վաղվա քաղաքացու լիարժեքությունը:

# ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ա. Ս. Մակարենկո, Ընտանեկան դաստիարակություն, Երևան, «Լույս», 1985թ.:
2. Ս. Սեդրակյան «Ընտանիքի հոգեբանությունե, Երևան «Ուրարտու 2008թ.:
3. С. П. Подласый, Педагогика, Москва, 2000г.
4. Л.Б. Шнейдер, Семейная психология, Екатеринбург, 2006г.